

ցիկ գործերն էլ: Եւ այսպէս, մի օրուայ կորուսոր չէ լինում արդեօք կորուստ բոլոր ապագայ օրերի: Սորա հետ միասին վստահ ես արդեօք քո կենաց շարունակութեան վերայ, կենացդ, որ ամեն մի ժամ ենթակայ է մահուան: Պատճառ որ ժարդում օցելն, ինչպէս որ ասում է Դաւիթ մարգարէն, խոպէ պէս են, ինչպէս դաշտի ծաղիկը: այնպէս ինազիկ: Գլումէ նարա վերայ ժամին՝ ու զայ, եւ զէ երևածնորս ուեզը: Սորա համար մի յետաձգիր երբէք բարի գործդ ապագայ ժամանակին: Ժամանակը թռչում է սրբնթաց և իւր սրբնթացութիւնովն կարող է հեան առնել, տանել և քո բարի մտադրութիւններդ:

Վերջացնում եմ խօսքս Ս. Առաքեալի խօսքովն. +անի ոյ ժամանակը մէր յեւածին է, բայի գուշելը անեն+: Մեզ համար, որ մոնում ենք նոր տարիս, աչա այս խօսքերն լինին իրատ: Գիշը կէայ, այն ժամանակը ել ու մէկը ու կարող գուշել, ասում է Փրկիչն մեր Յիսուս. Փրկչի այս խօսքերը մեզ համար խթան լինին և գրգեն մեզ Առաքելոյ մեզ տուած այս խրամը միշտ մոքներումս պահելու ու մեր կեանքին մէջ մեր գործերով ցոյց տալու: որ մենք նորա խօսքից միշտ օգուտ ենք քաղել իմաստաբար:

Ի՞նչ յաւելունից Թագաւորչին, անեղջին, անեղեւունին, անեղմասու միոյն Առաքութոյ պատիւ և փառ+ յաւելուան յաւելունից. այն:

(Թարգմ: Գ. Տ. Յ.)

ԿԵԱՆՔԻ ԳԻՑՈՒԹԻՒՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՀԱՄԱՉԱՅ ԶԼԻՇԵՐԻ

ԵՒ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ՀԱՇՑԵԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

### Ի ԾՆՈՒՆԴԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Վսեմ քաղցի արժանացան արեելեամ մոգերը Բեթղեհէմումը: Միլիօնաւոր հեթանօսների մէջ նրանք առաջինը եղան, որ ճանաչեցին և մեծարեցին նորան, Որին սպասում էին այնչափ դարեր արդարները: Նահապեաններն ու մարգարէները ցանկանում էին տեսնել նորան, որ տիեզերաց Թագաւորն էր և Վար-

դասղետը. բայց տեսան հեթանոս իմաստունները, Հիեշտակաց գասքը հանդիսաւոր կերպով տօնում են նորա ծնունդը, հեթանոս իմաստուններն էլ յայտնիում են իրրե մասնակիցք երկնի և երկրի հանդիսաւոր տօնախմբութեանն աստղի առաջնորդութեամբ։

Ի՞նչ բաղդաւոր մարդիկ են այս արեւելեան մոգերն։ Ի՞նչպէս չնախանձենք նոցա բաղդին։ Ի՞նչպէս նրանց իմաստութիւնը մենք ևս ունենալ ցանկանք։ Ի՞նչպէս նախանձաւոր ցլինինք նրանց բարձր գիտութեամն։

Արդեօք միայն գիտութիւնը շպարգելց մոգերին իրենց բաղդաւորութիւնը։ Հին ժամանակներումը գիտութեան քուրմեր շատ են եղել, շատ են եղել շատ բան իմացողներ։ Մեր մէջն ամենահասարակ քրիստոնէի գիտեցածներն անդամ աւելի բարձր են և աւելի ճիշտ, քան հեթանոս իմաստունի գիտեցածներն, իսկ երկնից յայտնութիւնները մեզ չեն պարգևվում։ Ինչի՞ցն է արդեօք։

Դառնանք դէպի մոգերը, Բաւտկանացա՞ն արդեօք նրանք նոյելով միայն յայտնուած աստղի վրայ։ Ոչ, նրանք այդ աստղը տիսնելուց յետոյ, թողին տուն, տեղ, իրանց աղքականներին, ծոնօթներին և իրանց սրտին մօտիկ ամեն բանն, ուխտեցին գիտարին ճանապարհորդութիւն յանձն աւնել, գնացին անծանօթ ճանապարհ, չիմանալով թէ՛ ուր են գնում և երբ տեղ կհաօնեն։ Ի՞նչպէս տեսնում էք, այստեղ միայն գիտութեան վերայ չէ բանն։ Այստեղ գիտութեան հետ ընկերանում է և ճանապարհակից է անձնանուիրութիւնը, կամքի ծանր քաջագործութիւնը, ամբողջ հոգեոր գիտարին աշխատութիւն։

Բայց մեր մէջն ինչպէս է։—Մեր մէջը գիտութիւնը մեր գործերի հետ հակասութեան մէջ է։ Շատ բան գիտենք, քիչ բան անում ենք, գիտութիւնները ընդլայնում ենք, իսկ գործներս աւելի չի լաւանում։ Քրտենք մեր գիտութեան մեր գործերի հետ անհամաձայն լինելն, ու մոտածենք թէ՛ որչափ կարեոր է միացնել գիտութիւնը կեանքի հետ։

Չենք կարող չխօստովախնել, որ նոր ժամանակներում հաւասոյ ամենաբարձր ճշմարտութիւնները բացատրելու համար

որչափ շատ բան է արուած. կրօնական գիտականութեան որչափ պտուղներն ենք տեսնում, որչափ համակարգութիւններ, որչափ տեսութիւններ, որչափ գրեանք: Եւ որպիսի տեսութիւններ, որպիսի համակարգութիւններ,— մէկը միւսից աւելի ընտիր, մէկը միւսից աւելի հրապուրիչ, մէկը միւսից աւելի անթերի մոգերով: Այս յառաջադիմութիւններին նայելով, ինչպէս վստահ չլինինք թէ՝ այս խելացի մարդիկը՝ լուսոյ հրեշտակներ են. միայն երկնքով ու Աստուծով են ապրում: Խոկ փորձով ինչ ենք տեսնում:

Փորձով կեանքի տիուր հակասութիւն մեր գիտութեանն: Ամենապարզ ճշմարտութիւն է թէ՝ պէտք է սիրել Աստուած ամեն բանից աւելի: Այս պարզ ճշմարտութեան մասին ևս գրուած են հազարաւոր գրքեր. իսկ փորձով տեսնում ենք, որ պարզ ճշմարտութիւնը չկար ու չկայ: Սրտերի մէջ տեղաւորուած են այլ և այլ կուռքեր. աստուածպաշտութեան օրերը հարուստի համար վայելչութեան օրեր են գարձել. իսկ աղքատի համար՝ աշխատութեան, կամ թէ ինչ որ աւելի օաարոտի բանն է, թէ մէկի, թէ միւսի օրերն անգործութեան օրեր են գարձել: Ինչո՞ւ համար են գրում գրքեր մի պարզ ճշմարտութեան վրայ: Նորահամար, որ մի բանով մարդոց աչքին ընկնեն:

Աստուած սիրելը մենք ոչ պեից չենք սովորում: Մենք այդ զգացմունքով ծնում ենք. չէնց որ մեր սիրոն սկսում է խփել, չէնց որ մեր (գիտակցութիւնը) միաքը սկսում է զարգանալ մեր մէջը, հոգին ձգտում է դէպի վերինը, հոգւոյ մէջ ծնում է միտք այն բանի մասին, ինչ որ մարդուս աչքը չէ տեսնում: Նայեցէք երեխաների վերայ: Նրանց մատաղահասակ կեանքի մէջ արգէն երեւում է սէր դէպի սուրբ բանը. նոցա անմեղութիւնը, հեղութիւնը, պարզութիւնը մեզ ուրախացնում է: Բայց երեխան արգէն պատանեկութեան տարիքին հասաւ, յետոյ այրացաւ: Նորա ունեցած գիտութիւնները մեծացան ու հաստատուեցան: Կկարծուէր, որ տարիքի հետ պէտք էր զարգանար կենդանի, պտղաբեր սէր դէպի Աստուած, կկարծուէր որ աարիքի այդ սէրը պիտի գառնար բոլոր կեանքին տիրապետող սկզբունքը: Բայց դործերի մէջ այն չենք տեսնում: Պա-

տանեկի և մինչեւ անգամ այրական հաօակում գտնուողի գործերի մէջ. ոչ անմեղութիւն կայ և ոչ պարզութիւն, ոչ հեղութիւն կայ և ոչ ջերմեռանգութիւն գէպի սուրբ բանը, մինչդեռ լաւ իմանում են նոքա սիրոյ պատուիրանը, մինչեւ անգամ շաա լաւ։ Այդ Բնչ բան է. մոքինն ուրիշ է, իսկ սրտինն՝ ուրիշ։ Միոքն առաջ է գնացել, իսկ ցանկութիւնները յետ են մնացել. կամքն ու խելքը գնացել են իրանց ջոկ ջոկ ճանապարհներով ու մէկ մէկի վերայ չեն նայում։ Ո՞ւր պէտք է գնան, հաօնեն, Խնչ որ պատահում է ու լինում մի մարդու, նոյնը կարող է պատահել ու լինիլ և լինում է ամբողջ մի ազգի։ Բայց աւելի տխուր է լինում կեանքի՝ զիտութեան հետ ունեցած ահմիաբանութեան պատկերը։

Եթէ որ նայենք կենցաղական բաների գիտութեան վրայ, այսուեղ ևս աւելի խելքի յառաջադիմութիւն կտեսնենք։ Մեր օրերումը միայն հարցնում են, միայն մտածում են կեանքի շահու և նիւթական օգտի վերայ։ Ո՞րքան տեսութիւններ, որքան համակարգութիւններ կտեսնես այդ մոտածմունքների մէջ։ Ամեն մի մարդ պատրաստ է առաջարկել աւելի լաւ տեսութիւն, աւելի լաւ հրահանգ՝ աղքատութիւնը պակասեցնելու համար, աւելի լաւ կարգ ու կանոն շահաւոր արտաքրութեան. առ ու տուրի և երկրագործութեան։ Հէնց մոքիցդ անց է կենում ու ասում ես ինքդ քեզ թէ՛ որաեղ որ է, կգայ շուտով այն ժամանակն, որ գայլերը գառների հետ միասին կարածեն. որտեղ որ է կգայ, կհասնի այն ժամանակն, որ անիծուած երկիրը եղեմ կդառնայ։ Բայց գրքերի մէջ ուրիշ բան ես տեսնում, իսկ գործերի մէջն՝ ուրիշ. գրքերի մէջ սուրբ բան անշահասիրութիւնն է, իսկ կեանքի մէջ փողն է կուռքը։ Արհեստագիտութեան մասին գրում են գրքեր այն նպատակով, որ ճարտարմուութեամբ ձեռք բերեն աստիճան ու փող։

Ասում են թէ՛ բարոյական գիտութիւնները գեռ ևս բաւական տարածուած չեն։ Թող այդպէս լինի։ Բայց այս ասելով չէ՞ որ իրանք իրանց են պախարակում։ Այս էլ մարդու ինքն իւր հետ ունեցած մի նոր հակասութիւն չէ՞ արդեօք։ Եթէ ասում են, որ պէտք է բարոյական տեղեկութիւններ ունենալ, է՞հ

ինչո՞ւ համար չկան, ինչո՞ւ այդ ունենալու տեղեկութիւնների հետն անհարկաւոր բաներն են դնում։ Ինչո՞ւ ժամանակ չեն տալի, որ բարոյական տեղեկութիւնները ձեռք բերուին։ Ինչո՞ւ դոցա ունեցած արժանիքը իրանց արած փորձատեսութիւններով չեն արդարացնում։

Արդարացնում են իրանց անձն իրենց ժամանակ չունենալով, շատ գործ ունենալովն։ Խոկ եթէ գիտեն, որ այդ շատ գործերն ամենակարևոր բանին արգելք են լինում, ինչո՞ւ համար ձեռք չեն քաշում՝ ունայն բանի հտեւից ընկնելու պատճառով։ Ժամանակ չունենալուց, ու հնարում են և շատացնում ունայն բաները։

Մինչեւ որ յետ չդառնան այն բանին, ինչից որ քրիստոնէական կեանքը սկսել հրամայեց մեր ծէրը. մինչեւ որ չակսեն անձնանութիւնեան քաջագործութիւններ ունենալ ու կանքի աշխատութիւններ՝ խելքի ու գործերի իրար հետ համաձայն ցիկնելը չի վերջանալ, ճշմարիտ ու քրիստոնէական կեանքը մարդոց մէջը տեղ չի ունենալ ու չի հաստատուիլ։

Դիակութիւնը մարդուս սրտի հնացած կոպտութիւնը կարող է հարթել, հոգւոյ մակերեսոյթը կարող է յղկել, կարող է մեղմել վայրենի զգացմունքն։ Խոկ բարւոյն համար հաստատամբութիւն, խոկ խորին համոզմունք, խոկ անկեղծ զգացմունք տալիս են հոգւոյն կամքի աշխատութիւնները։ Կակուղ մեղրամոմի վրայ հետութեամբ են տպվում առարկաների պատկերները, բայց հեշտ էլ ջնջվում են- պողպատի վրայ դժուարութեամբ են քանդակում տաճարի պատկերը կամ անունը, բայց այն էլ կայ, որ քանդակը՝ ժամանակի ուտող մաշող ներգործութիւնը շուտ չի ջնջիլ։ Հենց նոյնպէս էլ գիտութիւնը միայն չէ, որ պաշտպանում է առաքինութիւններն անկումներից, երբոր ապստամբում են հոգւոյ դէմ մեղաց ցանկութիւնները։ Խելքը կարող է արդեօք մարդուս սուրբ և մեղսային հակումների իրար դէմ ունեցած կոռուի միջոցին դիմանալ մենակ. կարող է արդեօք վրդովուաղ հոգին ապահով կերպով պահպանել բարութեան մէջ, երբոր կամքը հմտութիւն չէ ձեռք բերել դէպի բարին, բարւոյն չէ ընդելացել։ Մարդու կա-

րող է շատ բարձր բաներ մտածել, մոքովը շաա վերանալ, իսկ  
կրքերը կշարունակեն իրանց գործն, այսինքն է՝ մարդուս  
գարձնել գաղան։ Անմաքուր անօթի մէջ շուռ է գալի, փշա-  
նում է ամենահամով ըմպելիքն. անմաքուր սրտի մէջ էլ ամե-  
նասուրք ճշմարտութիւնները ստանում են այնպիսի բյժ, որ  
յատուկ չէ իրենց։ Հեթանոսները ճանաչում էին Աստուած,  
բայց որ նորան պէտք եղած փառքը չտուին՝ Աստուծոյ վրայ  
ունեցած մոածմունքը փոխուեցաւ նրանց մէջ անմոռութեան,  
նրանց սիրած խաւարեցաւ, նրանց միտքը բթացաւ։

Ուրիշ բան է, եթէ որ միտքը լուսաւորելու հետ, կամքը լու-  
սաւորելն ևս միւնոյն կարգով է գնում։ Այն ժամանակ հէնց  
խելքի յառաջադիմութիւններն ուրիշ կերպ են լինում։ Հէնց  
այդ ճանապարհի մէջ,—խելքի և կամքի միասին աշխատելու,  
միասին գործելու ճանապարհի մէջ,—շատ լաւ են ճանաչում  
հոգւոյ փրկութեան համար եղած վտանգներն. այդ ճանապար-  
հի մէջ ճանաչում են ճիշտ միջոցները հոգին մեղքերից փրկե-  
լու։ Այդ իսկ ճանապարհի մէջ հասնում են մաքուր և կեն-  
դանի նկատումների, և կամքի փորձառութիւնը բանականու-  
թեան դատողութիւններին հաստատութիւն է տալիս. բանա-  
կանութեան ունեցած տեղեկութիւնները կամ գիտեցածները  
գառնում են ոչ թէ կարծիքական բաներ, որ տատանվում են  
հարթ հիման վրայ, այս կողմն, այն կողմն են թեքվում, ծըռ-  
վում, տարբեր (անբնական) մտքեր հետը խառնուելուց՝ այլ  
այլ ունեցած տեղեկութիւնները ծնում են մարդուս սրտի  
խոզքից, որ փափագում է սուրբ բանի. այդ տեղեկութիւննե-  
րըն առաջ են գալի կամքի ցանկութիւններից, որ գէովի երկինքն  
ձգտում։ Եւ հոգւոյ վրայ անդրագարձներքործութիւն ունե-  
ցոծ ժամանակն էլ անպառուղ չեն մնում, այլ յառաջ են բե-  
րում սուրբ ցանկութիւններ, մաքուր զգացմունքներ, Աստու-  
ծոյ կամաց գործեր։

Եղբարք, համաձայնեցէք ինձ հետ, որ ուրիշ բան է իրեն  
համարելլ Քրիստոսի անպիտան ծառայ, ուրիշ բան՝ ծուլու-  
թիւնիցը վատանալ։ Վատ բան է պարծենալ գործերով, իսկ  
աւելի վատ բան է պարծենալ, որ մենք այդ գործերը չենք

կատարում։ Աստուծոյ կամքն իմանալի և ամեն միջոցներ ունենալը փրկուելու համար ու գոհ լինել միայն, որ մենք բարի գործ չենք կատարում, —աստուածային շնորհքը չտեսնել չէ՝ արդեօք։

Ինչու համար ենք քրիստոնեայ անունը կրում։ Միթէ նորա համար, որ քրիստոնէական ճշմարտութիւններ բաւական գիտենք։ Ո՞չ. այն ծառան, որ գիտէ իւր տիրոջ կումքը ու չէ կատարել, շատ ծէծ էս-տի։ Ի՞նչպէս պէտք է ներկայանանք միւս կեանքում մեր գլխումն ունեցած ցնորդներով, ու մեր մէջ ունեցած այլանդակ դատարկութիւնովն։

Ո՞վ Տէր, տուր մեղայն շնորհքն, որ ոչ միայն մեր խելքով, այլև՝ մեր ամբողջ հոգւով, մեր բոլոր կեանքով մօտենանք Քեզ, —մուանալով այն ամեն երկրաւոր մեղ հաճոյ բանն, այն ամեն բանն, ինչ որ թանգ է մեր հոգւոյ հակմանց համար, ուրանսլով մեր անձը, գալ Քեզ մօտ մինչև երկնային երուսաղէմն, ինչպէս արևելքի իմաստունները Քեզ համար եկան երկրաւոր Երուսաղէմ։ Ամէն։

Թարգմ. 8. 8. 6.

ՄԵԶԱՆԻՑ ԱՌԱՋ ԵՂԱԾ ՄԱՐԴՈՅ ՈՒ ՄԵՐ ՊԱՊԵՐԻ ԳՈՐԾԵՐՆ.

Ա.Պէտր. Ա. 24, 25:

Երբոր ես իմ իսկական հայրենիքս վերադառնալու ցաւը սրբառումն յուզուած, հին ժամանակուայ մօտիկ բարեկամներիս տեսութիւն գնալ եմ ուզում, իմ ճանապարհս դուրս է տանում ինձ անձայն, մենակ, առանց մի լնկերի հանգստարանի արտասուաց հովիտն։ Այսուեղ ձայն չի լսվում ամենելին. կեանքի նշան չկայ. ամենքն էլ վազուց գնացել են յաւիտենական հանգիստը. միայն գարնանը ծաղկած թարմ վարդերը նրանց գերեզմանների վրայից կամացուկ ինձ ողջունում են։ Մեծ քամիներով եկած յորդահօս անձրեներից, մարմարեայ մահարձանների ու տապանաքարերի վրայ գրուած իմ սրտիս թանկագին անունները հազիւ են կարդացվում։ թէ ինչ կեանք են ունե-